

## ԺԱՄՅՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՎԱՅ ՎԱՐԴԱ- ՆԵՆՑ

ԺԱՄՅՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆՏ ԵՂԻՇԵ ՊԱՏՄԱԳՐԻ ԵՒ ՊԱ-  
ԶԱՐԱՑ ՓԱՐՊԵՑԻՈՑ.

(Խղիշէ. ապագրութիւն Վենետիկ 1859. Ղաղար, ապագրութիւն  
Վենետիկ)։

ԵՂԻՇԵ Եր. 7. «Մինչև յամն յերկրորդ Յազկերտի  
արքալից արքայի, որդուոյ Վռամայ... «Յարձակեցաւ ի  
վերալաշխարհին Յունաց, եհար մինչև ի քաղաքն Մծբին»։

Հսա նորագոյն և ճշտագոյն հաշուոյ Յազկերտ Բ ի  
թագաւորելը եղած է 438 օգոստոս 4 ին. որով  
Միջազետաց յարձակումը պէտք է գնել 439 ա-  
մարան վերջ, կամ աւելի լաւ 440 գարնան սկիզբ։  
ԵՂԻՇԵ Եր. 11. «Եւ զերկեամ մի կոռւեալ ոչինչ. կա-  
րաց ազգել նոցա» (այսինքն Քուշանաց)։

Նոյն հաշուով այդ երկամեալն պէտք է գնել 441  
և 442 ամառներուն. Սուաջին տարուայ պատերազ-  
մէն ետ կը դառնայ, իսկ երկրորդ տարուայ պա-  
տերազմին վերջ հաստատուն բանակետդ կը կազ-  
մէ ծորայ պահակին մօտ։

ԵՂԻՇԵ Եր. 11. «Այսպէս ամ յամէ սովորութիւն կար-  
գեաց, և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց,  
սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ, մինչև յամ  
մետասաներորդ թագաւորութեանն իւրոյ։ դարձեալ  
Եր. 15. «Եւ զայս առնէր սկսեալ ի չորրորդ ամէ մին-  
չև ի մետասան ամն իւրոյ տէրութեան»։

Եօթնամեալ ժամանակաւ Հայոց գունդերը հեռու  
պահելն և անուղղակի ուրացութեան ստիպելու  
ջանքերը կ'ինան 442 տարուոյ վերջէն մինչև 448  
տարուոյ վերջերը։

ԵՂԻՇԵ Եր. 16. «Արդ ի սկզբան երկոտասան ամի թա-  
գաւորութեան իւրոյ գունդ կազմէր անհամար բազմու-  
թեամբ. լարձակեալ հասանէր յերկիրն իտաղական . . .  
Քուշանաց»։

Այդ լարձակման թուականը կը լինի ուրեմն 449 տարին, հարկաւ ամառը: Ասկէ ետքը կը կատարուին ուրացութեան բոնագատութիւնք և բանակցութիւնք և թղթակցութիւնք և վերջնական հրաման նախարարաց տրուած Պարսկաստան երթալու, որք կը տրաւեն 449—450 ձմեռը:

Եղիշէ եր. 38. «Իրըև հասին ի դուռն արքունի և ի Մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին Մեծի թագաւորին»:

Վերոյիշեալ 449—450 ձմեռը շատ մը գործողութիւններ կատարուած են զորս լիշել աւելորդ կը սեպեմբ, և նոր 450 տարւոյ աւագ շաբաթ՝ օրը կը ներկայանան նախարարք Յազկերտի: Նոյն տարւոյ զատիկը Ապրիլ 16 ին է, որով ներկայացած օրերնին կը լինի Ապրիլ 15. և հայկական շարժական տոմարով՝ աչեկանի 18:

Եղիշէ եր. 39. «Կէտ եգեալ զժամանակն, զամկն վեցերորդ, տագնապէին և ստիպէին արքունի հրամանաւու: Առ երեսս ուրացութիւնէ յետոյ Հայոստանէ մէջ կրակապաշտութիւնը սկսելու համար պայմանաժամ կը նշանակուի վեցերորդ ամիսը կամ ամսամուտը, որուն հայ ամիս չլինելը՝ առանց անունի և լոկ թուահամարի կարգով նշանակուելէն յայտնի է: Պարսկական տոմարն ալ Հայոց տոմարին նը.ման՝ 12 երեսնօրեալ ամիսներով և 5 աւելեաց օրերով կազմուած է. և տարրերութիւնն այն է որ հաստատուն կէտ առնուած է գարնամուտի օրը Մարտ 9.ին, և չորս տարիներու միօրեալ տարրերութիւնը փոխանակ 1460 տարիներու զըջանին վրայ ամբողջ նահանջ տարի մը աւելցնելու, 120 տարին մի անգամ նահանջ ամիս մը աւելցնելով կուղղուի և հաստատուն տարեմուտը Մարտ 9 ին կը դառնայ: Մեր քննած ժամանակին մերձաւորագոյն ուղղութիւնը 411.ին եղած էր, և անկէ մին.չև 450, այսինքն 39 տարիներու մէջ 9 օր միայն յետաձգում տեղի ունեցած էր, և տարեմուտը այսինքն առաջին ամսոյ կամ Փրաւարտինի ամսա-

մուտք փետրվար 28-ին եկած լինելով, վեցերորդ ամսով կամ Շաժվալը ովի ամսամուտքը պիտի լինէր յուլիս 28-ին։ Ապրիլ 15 էն՝ յորում թագաւորին ներկայացան, մինչև Յուլիս 28 մերձաւորաբար երեքուկէս ամսական պալմանաժամ մը տրուած կը լինի նախարարաց որ երթան իրենց երկիրն ալ կրակապաշտութեան դարձնեն։

ԵՂԻՇԼ եր. 40. «Մինչեւ ի նաւասարդէ ի նաւասարդ, ասէ, յամենայն տեղիս... բարձցին կարգք եկեղեցւորք ... Զայս ամենալի որ ասացաք առ ժամանակ մի մինչեւ 1 գլուխ տարւոյ կատարեսցին ամենեքեան, և զալլն ամենայն առ յապար պատրաստեսցին։»

Սոյն տարւոյ նաւասարդի մէկը Օգոստոս 6-ին է և հազիւ ինն օրով կը տարբերի Պարսից վեցերորդ ամսոյն սկիզբէն, հետևաբար ինչ որ Պարսից համար վեցերորդ ամսիս էր, Հալոց համար նաւասարդ էր, որ և կրօնական և քաղաքական մեծ նշանակութիւն ունէր։ Նաւասարդին կրակապաշտութիւն սկսած ատեն հնար չէր որ նոյնօրին վերջանալը, հետևաբար նաւասարդէ նաւասարդ ամբողջ տարի մը, այսինքն 450 օգոստոս 6 էն մինչև 451 օգոստոս 5 պալմանաժամ հաստատուած էր. քրիստոնէութիւնը բնաջինջ ընելու և կրակապաշտութեան ամեն տեղ տիրող կրօնք լինելուն։

ԵՂԻՇԼ եր. 44. «Նոկ գունդն Հալոց ամենալի օգնականօքն հանդերձ և մոգացն բազմութեամբ յամսեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հալոց։

Ուրացելոց և Մոգուց խումբը իւր գործողութիւն. ները պատրաստելով, պալմանաժամէն յառաջ ճան. պալ եղած և Հայաստանի սահմանագլուխը հասած է։ Չորրորդ ամիսն ալ առանց անունի լիշուած, դարձեալ պարսկական ամիսն է, որ է Տիր ամիսը, օրոյ ամսամուտն ալ այն տարի Մալիսի 29-ին կիւնար, բայց ամսաթիւը որոշուած չլինելուն քանի օր յետոյ կրնամ գնել հասնելուն թուականը։

ԵՂԻՇԼ եր. 44. «Եւ եղկ լիտ աւուրց քսան և հնգից Մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ.

զարութեամբ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միա-  
շաբաթուա:

Անգղ գիւղի եկեղեցւոյն վրայ յարձակումն է զոր  
կը վանեն գիւղացիք գլխաւորութեամբ Ղևոնդ  
երիցու: 25 օրերը պէտք է հաշուել Ծաղկոան գա  
ւառին մէջ հասնելնէն, որու վերջին օրը կիրակի  
մըն է: Մայիս 29-էն 25 օր անցնելէ յետոյ կիրա-  
կին յունիս 25 ին կիլնայ, և 450 Յունիս 25 կի-  
րակի օրը պէտք է նշանակել իբրև ս. Ղևոնդի  
արիւթեան թուականը: Աւելուդ չէ լիշելթէ այդ  
25 օրերու մէջ նոյն ինքն մոգերու հետ գտնուող  
ի ներքուստ ուխտապահ նախարարները կրցան քա-  
ջալերել Անգղոց գիմադրութիւնը:

ՂԱԶԱՐ. եր. 203. «Եւ կատարեալ զայս ամենայն գոր-  
ծըս ըստ ասելոցս կարգաւ, գարդարեցին անդէն զաւուրս  
տօթոյն և ապա փութացան իջանել Ալրազատ գաւառա:  
Ուխտապահները իրենց գիմադրութեան կը ձեռ-  
նարկեն 450 տարւոյ ամառնալին սաստիկ տօթե-  
րէն ետքը:

ԵՂԻՇԵ. եր. 61. «Ողջ և առողջ հասուցեալ յաւուրս  
երեսուն մերձ ի սահմանս հալրենի աշխարհին...: Քան-  
զի ժամանակ ձմերայնոյ հասեալ էր»:

ՂԱԶԱՐ. եր. 219. «Չուեցին միաբան ամենեքին յաշ-  
իսարհէն Աղուանից լերկիցն Հայոց ի գաւառն Ալրազա-  
տալ և անդ զաւուրս դառնաշունչ օդոյ ձմերայնոյն ըստ  
սովորութեան իւրեանց դաշարեալք փութացին առհա-  
սարակ անձկով զաւուրս գալինանալին ամսոյն տեսանել:

Վարդանի գունդը ձմերան սկիզբ երեսուն օրով  
Աղուանից աշխարհէն կը դառնայ Ալրազատ, որ  
կը կատարուի 450 Նոյեմբեր, կամ Հայոց Տրէ ամ-  
սին վերջը:

ԵՂԻՇԵ. եր. 62. «Պատուէր հրամանի տուեալ աշխար-  
հին զողջոյն ամիս Քաղոց պահօք և աղօթիւք առնել  
ինդրուածս առ Աստուած, և զտօն պատերազմացն յաղ-  
թութեան խառնել ի սուրբ տօն յալտնութեան Քրիս-  
տոսի»:

Ցիշեալ տարւոյ Քաղոցը կսկսի 450 դեկտեմբեր 4 ին

և կը վերջանայ 451 լունուար 2.-ին, որ կը պատասխանէ Յիսոնակաց պահոց, զոր աւելի խստութեամբ կը հրամալուի պահել: Իսկ Աստուածայալտնութեան տօնը 451 լունվար 6 շաբաթ օր կիլնալ Արացի 4.-ին, և շատ լաւ կրնար ըսուիլ թէ Քաղոցի պահքը պատրաստութիւն է Քրիստոսի Յալտնութեան:

**ՀԱԶԱՐ.** Եր. 221. «Եւ կատարեալ զաւուրս ձմերալին ցրտաշունչ օդոյն և հասեալ ի տօն մեծի Զատկին»:  
Դարձեալ Եր. 222. «Ազդ առնէր ուխտապահացն, որք յաղագս տօնի աւուրցն Երթեալք էին ի տունս իւրեանց կատարել զտօնն Զատկի առ ընտանիս իւրեանց»:

451 տարւոյ Զատիկը Ապրիլ 8 ին էր որ Հալոց շարժական տօմարով կուգայ Ահեկանի 6 ին, որ ձմերան վերջանալուն թուական է այն Երկիրներու Համար:

**ԵՂԻՇԼ.** Եր. 92. «Եւ քանզի գարնանալին էր ժամանակն ծաղկալից դաշտքն դառնալին լորդահոսանս արեանց բազմաց»:

**ՀԱԶԱՐ.** Եր. 226. «Իսկ ի յաւուր ուրբաթու Մեծի տօնին Պենտեկոստէին, դիմեալ հասանէին»:

Ուս լիշտակուած ուրբաթ օրուան յաջորդող շաբաթ օրն է որ տեղի կունենալ Աւարալի պատերազմը: Ղազարու բացատրութիւնը իմացուած է սովորաբար իրը Հոգեգալստեան ութօրէից մէջ ին. կող ուրբաթը և անոր յաջորդող շաբաթը, և որով. Հետեւ 451 տարւոյ Հոգեգալուստը Մայիս 27.-ին կիյնար, Աւարալի պատերազմին թուական նշանակուած է Յունիս 2: Սակայն Հոգեգալստեան յաջորդող ուրբաթը Պենտեկոստէի ուրբաթ չէ. այլ Եղիական պահոց ուրբաթ, կամ հին բացատրութեամբ՝ Ամարան Աղուհացից առաջին շաբաթուն ուրբաթն է և երբէք Պենտեկոստէի հետ յարաբերութիւն չունի և անկէ անուն չառնուր: Իսկ շաբաթ օրը յորում պատերազմը տեղի ունեցաւ նոյն-պէս Պենտեկոստէ չէ, այլ Երեմիա մարգարէի տօն է, և հետեւաբար Պենտեկոստէ անուն չկրնար

առնուլ։ Ցետ դարսուց սոյն օրը վախճանած է Գրիգոր Վկալասէր կաթողիկոսը և օրը բացատրելու համար Ուռհալեցին կը գըէ։ «Յառաջին շաբաթն ամարան աղուհացիցն յաւուր շաբաթու» (եր. 372), և Վկարդան կը գըէ։ «Յաւուր շաբաթու ի լիսնակուցն ամարան ի տօնի Երեմիալի մարգարէի» (եր. 114). Դարձեալ Նազար (եր. 227) ուրբաթ երեկոյին համար կ'ըսէ։ «Եւ հասեալք ի ժամ երեկոյին և զկանոն պաշտաման ժամու աղօթիցն ըստ սովորութեանն լցեալ զուարճանալին չափաւոր ուրախութեամբ կերակրովքնա։ Այսպիսի բացատրութիւն մը չպատշաճեր պահք ուրբաթի մը. և այն ալ աղուհացից կամ լիսնակաց պահոց ուրբաթի մը, բայց շատ լաւ կրնալ պատշաճիլ ուտիք օրուան մը, որպիսի էր Հոգեգալստեան նախընթաց և յինանց վերջին ուրբաթ օրը։ Տօնացոլցները կը վկայեն համաձայնութեամբ թէ ուտիքը կատարեալ էր լիսուն օր Զատկէն մինչև Հոգեգալուստ. և Հոգեգալստին տէրունին ալ ուտիքն ալ կը վերջանար, և յաջորդ օր պահք կսկսէր։ Շնորհալին եղաւ օր Հոգեգալստեան տօնը եօթնօրէք ըրաւ, և հրամալեց միանգամայն օր Համբարձումէ Հոգեգալստստ ինն օր պահք ըլլալ, կամ գոնէ երեք օր պահք պահչուի, ինչպէս օր մենք ալ ալժմ կը կատարեմք։ «Սահմանեաց զի ի Համբարձմանէ մինչև ի Պենտէկոստն պահս պահեսցեն, և թէ ծանր թուի զբովանդակն պահել, զըորեքշաբաթին և զուրբաթսն պահեսցեն, օր է երեք օր ըստ սուրբ Երրորդութեան։ Արդ Հոգեգալստեան նախընթաց ուրբաթ օրը շատ լաւ կրնալին Աւարալի բանակին զօրավարք և զօրականք և իրենց հետ եղող եպիսկոպոսունք և քահանալք կերակրով զուարճանալ և ուրախութիւն ընել։

Ուրեմն հարկ է ամենայն ճշտութեամբ հաստատել թէ Աւարալի պատերազմի թուականն է 451 տարւոյ Մալիս 26 ը և ոչ յունիս 2-ը, շաբաթ օր, և վերջին օր լինանց և լրումն անօրինակա-

նաց։ Իսկ Հայոց Մարերի 26 թուականը զոր կը լիշէ Զամշեան, երբէք պատմութեանց մէջ չկալ, այլ յունիս 2-ը առնլով զայն հայ ամսոց վերածած է, սակայն այս մասին ալ փոխանակ բուն հայկական շարժական կամարին հետևելու, ինչպէս էր ժամանակին սովորութիւնը, սարկաւագադիր հաստատուն տոմարին հետևած է որ յետ ժամանակաց կարգադրուեցաւ։ Նարդական տոմարով յունիս 2 ը հաշուելով կունենալինք Մարդաց 1. այլ որովհետև ալդ թուականը սիրալ է ուստի շարժական տոմարով Մալիս 26 ը պէտք է հաշուել Մարերի 24։ Հայագէտն Բրոսէ (Brosset. Հատ. Ա. եր. 57) կը գըէ թէ ինքն ալ առաջ Պենտեկոստէի նսխընթաց ուրբաթը հաջուած էր, այլ յետոյ Զամշեանի ենթադրութեան հետևած։

**ՀԱԶԱՐ.** եր. 249 «Նենգաւորն Վասակ յերեքտասաներորդում ամի Յաղկերտի արքային Պարսից, և ինքն չուարարեալ և ալլնա»։

«Նախարարաց և քահանալից բանտարկութիւնը և Պարսկաստան տարուիլը, և Վասակին անոնց հետ երթալը, պատերազմէն վերջը եղաւ. 451 ամարան, որովհետև Յաղկերտի 18-րդ տարին կը լրանալ Օգոստոս 4 ին. ուստից յառաջ պէտք է գնել ձեր. բակալութիւնները և ուղեորութիւնները։

**ԵՂԻՇՀԵ** եր. 101. «Իսկ զսուրբ քահանալսն վասն զի կապանօք տանէին, յետ երկուց ամսոց և քսան աւուր հասանէին ի ձմերոցն արքունի»։

Ութսուն աւուրց ճանպորդութիւնը կրնալ երկար երևիլ, բայց կապանօք երթալու պալմանը կը բացատրէ երկարութիւնը։ Ղազար ալ կը պատմէ (եր. 212) թէ ինչպէս քահանալք կանուխ ճանպալ ելնելէն յետոյ Վասակ կուգալ, կը հասնի և անցնելով աւելի առաջ արքունիք կերթալ։

**ԵՂԻՇՀԵ** եր. 110. «Արդ ի վեշտասաներորդի ամի տէրութեան նորին թագաւորի» այսինքն Յաղկերտի։

**ՀԱԶԱՐ** եր. 287. «Մինչև յամս վեշտասաներորդ թագաւորութեան իւրոր։

ԱՍՈՂԻԿ եր. 79. «Եւ յետ պատերազմին Վարդանալ զկնի երկուց ամաց սուրբ Նեւոնդեեանք Յովսեփաւ հայրապետաւ կատարեցան։ Ըստ որում ստուգեալ մեր գամօ թագաւորացն գտաք հանդիպեալ ի հնդետասան ամն Յազկերտի և յերեքն Մարկիանոսի»։

Ասողիկի հաշիւը կը տանի զմեզ 453 տարին, և Եղիշէի և Ղազարու թուականն ալ հակառակ չը դառնալ եթէ դիտեմք, որ երկուքն աչ իբր գըլ-խաւոր դիպուած ի նկատի կառնուն Քուշանաց նոր պատերազմը որ 453 աշնան մօտ տեղի ունենալով, ճիշդ ու ճիշդ Յազկերտի 16 բդ տարւոյն լրանալուն և 16 բդ տարւոյն լրանալուն կիլնալ, և պատերազմն ալ նոր տարւոյն կը պատշաճեցուի։ ԵՂԻՇ եր. 142. «Եւ կատարեցան սոքա վեցեքեանն... որ օր քսանևհինդ էր Հրոտից ամսոր»։

ՂԱԶԱՐ. եր. 843. «Եւ ալսպէս ի վեշտասաներորդում ամի ժագաւորութեան Յազկերտի, որ օր քսանևհինդ ըլ ամսոյն Հրոտից պսակեցան սուրբքն վեցեքեան»։

ՂԱԶԱՐ. եր. 292. «Եւ ալսպէս վկալեցին սուրբքն (Սամուէլ և Աբրահամ) լամսեանն Հրոտից որ օր եօթն էր ամսոյն»։

ԵՂԻՇ. եր. 111. «Հրաման ետ վասն երկուցն որ ան-դէն ի կարաւանին առ իւրն էին, Սամուէլ և Աբրա-համ, զի գաղտ կորուսցեն զնոսա»։

ԱՍՈՂԻԿ. եր. 80. «Կատարեցան լամսեանն Հրոտից, որ օր քսանևվեց էր ամսոյն, նոյն Յուլիսի, լաւուր կիւ-րակէի»։

Վերոլիշեալ 453 տարւոյ Հրոտից ամիսը կակսի Յուլիս 1.ին, չորեքշաբթի օր, և Հրոտից 26.ը յուլիս 26.է և օրն ալ կիրակի, և Ասողիկի թէ Հրոտից 26.ը Յուլիս 26 նշանակելը և թէ օրը կիրակի յուցնելը կատարելապէս կը պատասխանեն 453 թուականին։ Ալ եթէ Հրոտից 25 առնունք ըստ Եղիշէի և Ղազարու կունենանք Յուլիս 25. և օրը շաբաթ։ Նատերէն Յազկերտի 16.բդ տա-րին դէպ իւր վերջը առնուելով, Ղեռնդեանց նա-հատակութիւնը կը դրուի 454 տարւոյ Յուլիսին։

և այն օտտեն Հրոտից 25 կլինի Յուլիս 25 և օրը դարձեալ կիրակի։ Ասողիկի հաշիւը կը վերադասուի անոր համար որ կը ճշգէ Վարդանանց և Ղեռնդեանց միջոցը երկու տարիի, և տուած ամսաթիւն ալ և օրն ալ կը համապատասխանէ ալդ պայմանին, սակայն Եղիշէի և Ղազարու պատմութիւնները երբէք միջոցին տևողութիւնը չեն իշեր։

Յախմաւուրքը Ղեռնդեանները կը դնէ Հրոտից 25 ին, և Վարդանեանները Հրոտից 30 ին, սակայն վերջինը բնաւ ճշգութեան նշան չունի։

Սամուէլի և Արքահամու վկալութիւնը Հրոտից 7 ին, կամ Յուլիս 7-ին երեքշաբթի օր դրուելով միայն 19 օր տարբերութիւն կունենալ Ղեռնդի և ընկերաց նահատակութենէն, և ոչ թէ տարի մը ինչպէս ոմանք կը կարծեն. զի ըստ երկուց պատմագրաց Սամուէլ և Արքահամ նահատակուցան ի Վարդգէս (Ղազար եր. 292) կամ ի Վատգետս (Եղիշէ եր. 139), և ՚Իենշապուհն ալ օր առաջ ճանպալ ելած էր երթալ ի ՚Նիւշապուհ որ միայն 15 օթեւոնով հեռու էր (Եղիշէ. եր. 111) և հասածին պէս քահանաները տարաւ ի ՚Ոեվան, մէկ օրուան ճանպալ հեռու, և միւս օր նահատակեց անապատին մէջ կալանաւոր նախարարներէն գաղտնի։

Եղիշէ, եր. 153. ՚Նախարարք Հարեւշդոմ ՚Նապուհի միջնորդութեամբ. իբր կալանաւոր ՚Նկատուելով հանդերձ պատերազմի գացին, և «Առաւելեալ գտան ի գործ արութեան», ապա «Յանդիման եղեն Յազկերտի»։ Սա «Խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութիւն», այլ ալս խոստումը չկատարած «Հասանէր վախճան թագաւորին իննսկտասներորդ ամի թագաւորութեան իւրոր»։ Այս պատճառաւ «Երկու որդիք նորա ի վերալ թագաւորութեան կոուէին»։ Այդ միջոցին «Ապստամբեաց և Աղուանից արքայն», հետևաբար «Վասն ալսը ամենալի լապաղումն եղև չարձակելուն նորա լաշխարհն»։

Յազկերտ մեռաւ 457 ին և ալս տարին պատահեցան վերոլոգեալքն։ Յազկերտի թագաւորութեան

թուականը կը լինի և ուրեմն 488 էն 19 տարի  
մինչև 457, և այս թուականին կսկսի Պերողի  
թագաւորութիւնը, որուն դայեակն Ռահամ Միհ.  
րան սպաննեց երեց արքալորդին Որմիզդը:

Եղիշէ եր. 155. «Եւ ի նմին հինգերորդ ամին զբազ-  
մաց նոցա անդրէն զկեանսն շնորհեաց, և ալլոցն առ  
լոյսն խոստացաւ լամն վեցերորդ միանգամայն արձակել  
զամենեսեան կենօք և պատուով»:

Պերողի 5 րդ տարին կը հասնի 461-ին, որ տարին  
իսկութեամբ ներողութիւնը կը տրուի, և կը լրա-  
նալ նախարարաց գերութեան տասնամեալ միջոցը  
451—461, որ աւելի ճշտութեամբ գրուած է «զինն  
ամ և զվեց ամիս» (Եղիշէ, 150). Պերողի 6 րդն է  
462 տարին, և այս կը լինի գերութեան աւար-  
տը և նախարարաց դարձին տարին, բայց տար-  
ւոյն վերջերը առնլով, որպէս զի 451 Մայիսի  
վերջէն լորում պատերազմը կը լինի և պատժաւո-  
րաց ժամանակը կսկսի մինչև 462 Մայիս տաս-  
նումէկ տարիներ լրանան և անկէ ետքը 12-րդ  
տարին սկսելուն 462 աշնան միջոցին դարձը գոր-  
ծագրուի, երբ արդէն սկսած է «երկոտասաներորդ  
ամն պատժաւորացն»:

Դիտելի է միայն զի Եղիշէ գիտէ Աքրահամու-  
գարձը (եր. 148), որ նախարարաց դարձին հետ  
միւնոյն տարին տեղի ունեցաւ, բայց կարծես. թէ  
չգիտեր նախարարաց դարձը և կըսէ. «բայց ի տե-  
ղի այսր ինձ դարձեալ գալ պիտի». (եր. 155):  
Սակայն հնար չէ ըսել թէ Եղիշէ տակաւին տե-  
սած չէ նախարարաց դարձը. ընդ հակառակն ալդ  
փառաւոր պարագալն և ուրախալի եղելութիւնը  
իրենց մանրամասնութիւններով առանձինն գլխոյ  
նիւթ ընելու կամք կը ցուցնէ: Ղազար ալ հա-  
մաձայն է. «Որք եկեալք ի տունս իւրաքանչիւր  
լամի վեցերորդի թագաւորութեան Պերողի և կե-  
ցեալք իւրաքանչիւրոց ըստ սահմանելոյ ի Տեառ-  
նէ» (եր. 375), այսինքն է 462 աշնան. կամ ձմե-  
րան մէջ դէպի սկիզբն 463 տարւոյ: Տարիներու

ալդ կերպ հաշուելուն կը նպաստէ Հալոց տոմարն  
ալ, որոյ տարեգլուխը կը լարմարի Յազկերտի և  
Պերողի տարիներուն, Յազկերտ կը թագաւորէ 0.  
գոստոս 4. ին և նոյն 438 տարւոյ Նաւասարդը  
կսկսի Օգոստոս 9. ին. Պերող կը թագաւորէ Յուլիս  
30 ին և նոյն 457 տարւոյ Նաւասարդը կսկսի 0.  
գոստոս 4. ին. Հալ թուականը և թագաւորական  
թուականը նոյն կերպով կը քայլեն և տարինե-  
րուն սկիզբը կամ մէջը կամ վերջը նշանակուած  
չլինելուն, հնար է համեմատութիւններէ օգտուիլ  
և դիպուածի մը միւս դիպուածէ համեմատական  
հեռաւորութեանց վրայ պէտք եղած ուսումնասի-  
րութիւնները ճշդել, առանց առերևոլթ անհա-  
մաձայնութիւններէ շփոթելու,

o.

